ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սաուդյան Արաբիայի Թագավորություն (Ռիյադ) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Նարեկ Մկրտչյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Սաուդյան Արաբիայի Թագավորություն (Ռիյադ), 2024 թվականի ապրիլի 27-30-ը

4. **Հրավիրող կողմը.**
   Համաշխարհային տնտեսական ֆորումի նախագահ Բորխե Բրենդե

5. **Գործուղման նպատակը.**
   Մասնակցություն Համաշխարհային տնտեսական համաժողովին

6. **Քննարկված թեմաները.**
   Համաժողովի ընթացքում քննարկվել են այն բազմակողմ մարտահրավերներն ու հնարավորությունները, որոնց ներկայումս բախվում են երկրները և որոնք կարող են խոչընդոտ հանդիսանալ ոլորտային քաղաքականությունների մշակման գործընթացում:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

- Համաշխարհային տնտեսական ֆորումին մասնակցության շրջանակում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի առաջին տեղակալ Գևորգ Մանթաշյանի հետ հանդիպում ենք ունեցել Սաուդյան Արաբիայի Թագավորության մեդիայի նախարար Սալման բին Յուսեֆ Ալ Դոսարիի հետ, որի ընթացքում քննարկել ենք երկկողմ ոլորտային համագործակցության հնարավորություններն ու փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր: Անդրադառնալով սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող և նախատեսվող բարեփոխումներին՝ ընդգծել եմ ոլորտային ռազմավարությունների մշակման կարևորությունը: Այս համատեքստում մանրամասնել եմ Զբաղվածության ռազմավարությամբ սահմանված գերակայությունները՝ նշելով, որ նախատեսվող աշխատանքները նպատակաուղղված են մարդկային կապիտալի զարգացմանը, բարձր արտադրողականությամբ աշխատատեղերի աճին, ինչպես նաև աշխատուժի առաջարկի և պահանջարկի անհամապատասխանությունների կրճատմանը:

Սալման բին Յուսեֆ Ալ Դոսարին ներկայացրեց երկրի զարգացման 2030 տեսլականի շրջանակում մեդիա ոլորտում ավելի քան 140 հազար նոր աշխատատեղերի ստեղծման նախագիծը:

- Հանդիպել եմ Սաուդյան Արաբիայի Թագավորության էկոնոմիկայի և պլանավորման նախարար Ֆեյսալ բին Ֆադլ բին Մուհսին Ալ-Իբրահիմի հետ:
  Քննարկել ենք Հայաստանի և Սաուդյան Արաբիայի Թագավորության միջև տնտեսական և աշխատաշուկայի հարաբերությունների զարգացմանն առնչվող հարցեր: Կարևորվել է բարձր արտադրողական ոլորտներում երկու երկրներից աշխատանքային ռեսուրսների ներգրավման հնարավորությունը, անդրադարձ է կատարվել երկկողմ համագործակցության հեռանկարներին:

- Սաուդյան Արաբիայում հանդիպել եմ արքայազն Աբդուլազիզ բին Թալալ Ալ Սաուդի հետ, ում մի շարք գլոբալ նախաձեռնությունների շնորհիվ աշխարհի ավելի քան 133 երկրներում իրականացվում են զարգացման տարբեր ծրագրեր:
  Հանդիպման ընթացքում պայմանավորվել ենք համագործակցություն սկսել արքայազն Աբդուլազիզի ղեկավարած՝ Արաբական ծոցի զարգացման տարածաշրջանային հիմնադրամի (AGFUND), ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և հայաստանյան տարբեր կառույցների միջև:
  Հանդիպման ավարտին Ալ Սաուդն ընդունեց հրավերս՝ Հայաստան այցելելու վերաբերյալ:

- Հանդիպում եմ ունեցել Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) գլխավոր տնօրեն Թեդրոս Ադհանոմ Գեբրեյեսուսի հետ:
  Հանդիպման ընթացքում քննարկել ենք հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի ոլորտում համագործակցության ուղղությունների ընդլայնման հնարավորությունները, անդրադարձել ենք նաև համատեղ իրականացված աշխատանքների արդյունքներին:
  Ներկայացրել եմ Հայաստանում անձի ֆունկցիոնալության գնահատման համակարգի ներդրման և իրականացման գործընթացը՝ հիմնված ԱՀԿ ֆունկցիաների միջազգային դասակարգման սկզբունքների և մոտեցումների վրա և ընդգծել եմ, որ նոր համակարգի ներդրմամբ ֆունկցիոնալության գնահատման գործընթացը դարձել է առավել պարզ, թափանցիկ ու հասցեական՝ հնարավորություն ստեղծելով բազմակողմանիորեն գնահատել քաղաքացիների կարիքները, հաշմանդամությունը դիտարկել նաև սոցիալական գործոնների համատեքստում և որոշել յուրաքանչյուր անձի անհատական կարիքներին համարժեք սոցիալական ծառայությունների տեսակը:

Քննարկվել է նաև հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի և անձի ֆունկցիոնալության գնահատման համակարգի վերաբերյալ Հայաստանում համատեղ միջոցառում անցկացնելու հնարավորությունը:

Թեդրոս Ադհանոմ Գեբրեյեսուսը շեշտեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ ունեցած ոլորտային համագործակցության դերն ու այս համատեքստում ողջունեց Հայաստանի հանձնառությունն անձի ֆունկցիոնալության գնահատման համակարգի ներդրման ուղղությամբ:

- Հանդիպել եմ Սաուդյան Արաբիայի Թագավորության կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Աբդուլլահ Ալսուահայի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեցին երկկողմ համագործակցության հնարավորությունները, մասնավորապես՝ սոցիալական ծառայությունների թվայնացման, թվային տեխնոլոգիաները զարգացնելու և նորարարություններին աջակցելու ուղղություններով: Այս համատեքստում երկուստեք ընդգծվեց նաև թվային տնտեսության դերը՝ երկրների զարգացման գործում:
  Հանդիպմանը մասնակցել է նաև ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի առաջին տեղակալ Գևորգ Մանթաշյանը:

  Ներկայացրել եմ Հայաստանում թվային տեխնոլոգիաների միջոցով գործող՝ կանանց տնտեսական զորեղացման ծրագրերը, որոնք ուղղված են նրանց ներուժի բացահայտմանը, մասնագիտական կարողությունների զարգացմանն ու զբաղվածության ապահովմանը:
  Քննարկել ենք նաև սոցիալական պաշտպանության ոլորտում կիրառվող թվային լուծումները:

  Հանդիպման ավարտին Աբդուլլահ Ալսուահային փոխանցել եմ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Մխիթար Հայրապետյանի հրավերը՝ Հայաստան այցելության վերաբերյալ:

- Հանդիպում եմ ունեցել Սաուդյան Արաբիայի Թագավորության Տեղեկատվության և արհեստական բանականության գործակալության (SDAIA) նախագահ դոկտոր Աբդուլլահ Շարաֆ Ալղամդիի հետ:
  Քննարկել ենք հետագա համագործակցության հետ կապված հարցեր, մասնավորապես՝ սոցիալական պաշտպանության ոլորտում արհեստական բանականության կիրառման հնարավորությունների առնչությամբ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

- Սաուդյան Արաբիայի Թագավորության մեդիայի նախարար Սալման բին Յուսեֆ Ալ Դոսարիի հետ հանդիպման ավարտին պայմանավորվածություն է ձեռք բերվել իրականացնել վերապատրաստման և վերակրթման լավագույն փորձի փոխանակման ծրագրեր:

- Արքայազն Աբդուլազիզ բին Թալալ Ալ Սաուդի հետ հանդիպման ավարտին պայմանավորվածություն է ձեռք բերվել համագործակցություն սկսել արքայազն Աբդուլազիզի ղեկավարած՝ Արաբական ծոցի զարգացման տարածաշրջանային հիմնադրամի (AGFUND), ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և հայաստանյան տարբեր կառույցների միջև:

  Սաուդյան Արաբիայի Թագավորություն այցի ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկություններ չկան:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

Հավելված N 2
ՀՀ վարչապետի
N 326-Ն որոշման

«Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Օրինակելի ձև

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը ***ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն***

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը ***ՀՀ վարչապետի 22.04.2024թ-ի 382-Ա որոշում***

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

ՀՀ ԱՍՀ նախարար՝ Նարեկ Մկրտչյան

4. Գործուղման վայրը- ***Սաուդյան Արաբիայի Թագավորություն ՝ Ռիյադ***

5. Գործուղման ժամկետները ***27.04.2024թ-30.04.2024թ.***

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

(*թվարկել՝ ճանապարհածախս,* ***գիշերավարձ, օրապահիկ*** *և այլն*)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

- ***ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը***
- բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		***Մկրտչյան Նարեկ***	***Ընդամենը (հազ. դրամ)***
Ճանապար-հածախս	Ավիաճառայության տեսակը **(էկոնոմ դաս,** բիզնես դաս)	884,712	884,712
	Ավիատոմսի և ավիատոմսի ամրագրման արժեքը (դրամ)	44,236	44,236
Գիշերա-վարձի հաշվարկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	-	-
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	-	-
	Օրերի քանակը	-	-
	Ընդամենը վճարվել է (դրամ)	-	-
Օրապահիկի հաշվարկ	Վճարը 1 օրվա համար (դոլար)	-	-
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	-	-
	Օրերի քանակը	-	-
	Ընդամենը վճարվել է (դրամ)	-	-
Այլ ծախսեր	-	-	-
	Մուտքի արտոնագրի վճար	-	-
	Այլ ծախսեր	-	-
	ապահովագրության վճար	-	-
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)			***928,948***

X

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԳԼԽԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԻՍՏ Signed by: MURADYAN SAMVEL 1104630109 **Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ**